

ՆԱՅԿԱԶ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

**ՆԱՅՈՑ ԳՐԻ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ԳՆԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Նայրնի է, որ ԺԸ. դարի վերջին և ԺԹ. դարի սկզբին Անդրկովկասը հայրեն-վեց Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ ծրագրերում: Ռուսաստանի համար կարևորություն ձեռք բերեց Անդրկովկասի շուրջ հասարակական կարծիքի սրելը ու ամրապնդումը: Պարմագիրական այդ պրակտիկ անհրաժեշտությունից էլ ռուսական գիրական շրջանակներում ծնունդ առավ ձևավորված կայսրության ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ու նրա պարմության հանդեպ հերաքրքրությունը: Ժամանակի ռուսական ամսագրերում և թերթերում երևան եկան Նայաստանին ու հայոց պարմության առանձին դրվագներին նվիրված ուշագրավ հրապարակումներ: Ռուսական հանրահայտ պարբերականի խոսարովանությամբ, փարաժաշրջանի երկրների մեջ, ամենից ուսումնասիրվածն ու հարուստը հայագիրական գրականությունն էր. «Կովկասագիրական հերագրությունների առումով ամենից խորն ուսումնասիրված է հայոց պարմությունը: Նայ պարմագիրական գրականությունը նաև ամենից հարուստն է: Նայերն ունեն մեծ թվով նշանավոր պարմիչներ, որոնց գործերն արդեն թարգմանված են ռուսերեն ու եւրոպական լեզուներով»¹:

Այդ ընթացքում զգալիորեն առաջադիմած հայկական մշակույթի նշանավոր կենսորոններ դարձան Մոսկվան, Պետերբուրգը, Թիֆլիսը, Կազանը, Աստրախանը, Նոր Նախիջևանը և այլ քաղաքներ: Հիմնվում են դպրոցներ, որոնք ավելի քան մեկ դար ծառայեցին ռուսահայության և աշխարհով մեկ սփռված հայության համար. 1810թ. Աստրախանում բացվեց Աղաբաբյան դպրոցը, 1815թ. Մոսկվայում՝ հռչակավոր Լազարյան ճեմարանը, 1824թ. Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, թեմական դպրոցներ են բացվում Երևանում և Շուշիում: Գնալով ավելանում է Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում սովորող հայ ուսանողների թիվը: Իրենց հիմնական կոչումից զատ, հիշարակած կրթօջախներից շարերը միաժամանակ հայագիրական խոշոր կենսորոններ էին և նշանակալից դեր խաղացին հայ պարմագիրության զարգացման գործում: 1809թ. ռուսերեն թարգմանվեց և հրապարակվեց Մովսես Խորենացու «Նայոց պարմությունը»,

¹ «Кавказский календарь», 1890, с. 32.

որին հաջորդեցին նաև մյուս պարամիչների աշխարությունների հրապարակությունները: Դրանք, որպես կանոն, սկսվում էին ընդարձակ առաջաբաններով, որոնք ռուս ընթերցողին էին հասցնում ոչ միայն հայ պարամիչի գործի արժեքը, այլև փվյալ ժամանակաշրջանի խորհուրդը, հանգամանք, որը բոլոր առումներով գնահատելի էր: Ընդ որում, ներկայացնելով հայոց պարամության մանրամասները, ռուս հեղինակներն առաջին հերթին նշում էին հայ գրի ու գրականության, իսկ առավելապես մարենագրության ակնառու նվաճումները: Կարծում ենք, որ ռուս հեղինակներից բերվող քաղվածքները համոզիչ կդարձնեն այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողովրդի գոյատևման գլխավոր պայմաններից մեկը եղել է և մնում է հայոց լեզվին ու պարամությանն ապավինելը:

Ռուս առաջին հեղինակներից մեկը, որն առավել հանգամանորեն անդրադարձավ հայոց լեզվին ու մարենագիությանը, Ս. Ն. Գլինկան էր: 1832-1833թթ. Մոսկվայում լույս տեսավ նրա «Հայ ժողովրդի պարամության փեսություն» հանրահայտ աշխարությունը: Գրքում ռուս հեղինակը, քննության առնելով հայ ժողովրդի գոյատևման խնդիրը, նրա կարևոր պայմաններից մեկը համարում էր կրթության և մշակույթի հանդեպ հայերի ցուցաբերած մեծ հոգաբարությունը. «Հայաստանը հարուստ է նշանավոր գրողներով: Նրանք հմուտ էին բանասիրության բոլոր ճյուղերում, իսկ պարամիչների սրելոծած բազում փարեգրությունները սրբությամբ պահպանվում էին վանքերում... Ինչ գանձերի պես էր փրանար մի երկիր,- գրում է նա,- որը գիությունների ապաստարան էր անգամ այն ժամանակներում, երբ բռնության անողոք ձեռքն ամենուր հեղապնդում էր նրան»²:

Աշխարհային պարամագիական կարևոր արժանիքներից մեկն այն է, որ նրանում հարկապես կարևորվում է Հայաստանի՝ որպես Երոպայի և Ասիայի միջև կամուրջ հանդիսանալու հանգամանքը: Գլինկան այն համարում է հայ ժողովրդի կենսունակությունն ու առաջադիմությունը խթանող հիմնական գործոն: Նրա համոզմամբ, հայերը ձեռներեց ժողովուրդ են և օժտված մեծ ունակություններով, արտադրությունն ու առևտուրը զարգացնելու նախանձելի ձիրքով: Այս իմաստով, ռուս հեղինակը հայերին դասում է ժամանակի քաղաքակիրթ ժողովուրդների շարքը: Իր համոզումը հաստատելու համար Գլինկան բազում քաղվածքներ է բերում երոպացի պարամաբաններից. «Արքա Կիլեֆուրը գրում է, որ Ե դարում Հայաստանը Ասիայի նշանավոր ակադեմիաներից էր և որ նրա այդ առաքելությունը շարունակվեց մինչև ԺԵ դարը»³: Գլինկան իր հերթին ավելացնում է. «Այս երկրի քաղաքացիական օրենքները, աստվածապաշտությունը, կառավարման ձևերը, զորավարներն ու արվեստի հրաշքները զարմանք են պարճառում»⁴: Դժվար չէ կոսահել, որ հեղինակի ընդգծած քաղաքակրթվա-

2 С.Н. Глинка, Обзорение истории армянского народа, М., 1832, ч.1, с.4.

3 Մաս 2, էջ 111:

4 Անդ, էջ 99 -100:

ծությունը հենց այս բաղադրամասերն ունեն։ Մեկ այլ փեղ, քրիստոնեական Հայաստանին հարկացնելով մշակութային առաջնային դեր, Գլինկան նշում է. **«Մենք չենք կարող գրնել մեկ այլ քրիստոնյա ժողովուրդ, որի մոտ մի քանի դարերի ընթացքում հանդես գան այդքան պարմիչներ : Ընդհակառակը,- շարունակում է նա,- նրանցից շատերը նույնիսկ կորցրել են իրենց ծագման հետքերը: Հարցրե՛ք սիրիացուն, խալդյաններին, մարերին եւ շար այլ ցեղերի, հարցրե՛ք նրանց, թե ի՞նչ է հայրնի իրենց նախնիների մասին»⁵:** Հեղինակի համոզմամբ, Հայաստանը մշտապես գործուն կամ կողմնակի մասնակցություն է ունեցել Ասիայի կարևորագույն իրադարձություններին: Այս առումով, հեղինակն իրավամբ շեշտում է, որ առանց հայկական աղբյուրների ուսումնասիրության, անհնար է պարկերացնել Ասիայի պարմությունը. «Նա, ով Փարիզի գրադարանում ծանոթացել է հայոց ձեռագրերին,- գրում է նա,- լավ գիտի, թե ինչ լույս են սփռում դրանք Ասիայի բազում իրադարձությունների վրա, եւ թե ինչ փայլով է լուսավորում այդ պարմությունը՝ հարկապես, երբ հարցը վերաբերում է դեպքերի ժամանակագրությանն ու հին աշխարհի ժողովուրդների բնութագրություններին: **Միայն հայկական աղբյուրների շնորհիվ կարելի է հարակ պարկերացում կազմել Կասպադովկիայի, Կիլիկիայի, Կովկասի ու Սև ծովի ափի մյուս ժողովուրդների բարոյական նորմերի, լեզվի եւ այլնի մասին** »⁶: Գլինկայի ուսումնասիրության հիմնական աղբյուրը հայ պարմիչների գործերն են, որոնց մասին հեղինակը բարձր կարծիք ունի. «Հայկական աղբյուրները,- գրում է նա,- հավասարի փեղեկություններ են հաղորդում ոչ միայն հայրենի պարմության վերաբերյալ, այլեւ իրենց հարեալների եւ մասնավորապես Ասորեստանի մասին, որին նույնիսկ Դիոդոր Սիկիլիացին, Կիկերոնը եւ մյուսները վերագրում են հարյուր հազարավոր փարիների պարմություն: Այդ մասին հայկական փեղեկությունները համապարասխանում են եւ՝ դեպքերին, եւ՝ ժամանակաշրջանին...»⁷:

Գլինկան հավաստում է, որ հայ պարմիչների հաղորդումները հասարակվում են օրարագգի պարմիչների վկայություններով եւ հարկապես այն փեղեկությունները, որոնք անմիջականորեն վերաբերում են հայոց պարմությանը: Որպես ասվածի հաստատում, ռուս հայագետը հանգամանորեն ներկայացնում է օրար այն պարմիչներին, որոնք անդրադարձել են հայոց պարմությանը. Դիոդոր Սիկիլիացի, Քսենոֆոն, Պլուտարքոս, Պլինիոս Ավագ եւ ուրիշներ:

Գլինկայի ուսումնասիրության գլխավոր աղբյուրն, իհարկե, Խորենացու «Հայոց պարմությունն» է, որին հեղինակն իր հինգերորդ գրքում առանձին բաժին է նվիրել: Բարձր գնահատելով Պարմահոր պարմագիտական ժառանգությունը, նա գրում է. «Մովսես Խորենացու Հայոց պարմությունը, Հայկի ժամա-

⁵ Նույն փեղում, մաս 1, էջ 6: Այս եւ հետագա ընդգծումները՝Հ.Տ.:

⁶ Անդ, էջ 4 - 5:

⁷ Անդ, էջ 24 - 25:

նակներից սկսած մինչև մ.թ. 428թ., բազում կողմերով ուշադրության արժանի է: Շարադրանքը բարեկարգ է, սահուն և ջրնդիարվող⁸: Իհարկե, Գլինկան այս հարցում բացառություն չէր. ԺԹ. դարի թե՛ ռուս, թե՛ եւրոպացի պարամաբանների հայագիտական ուսումնասիրությունները գլխավորապես զրկած են Խորենացու գրքի հիման վրա:

Գլինկան բավականին մեջբերումներ ունի նաև Չամչյանից, որոշ տեղերում հիշատակում է նաև Ղազար Փարպեցուն: Այս ամենով հանդերձ, սակայն, Գլինկան հայ և օտար պարմիչների թողած ժառանգության գնահատման հարցում հաճախ է ընկնում չափազանցությունների մեջ, գրքի առանձին հատվածներում աչքի են զարնում նաև կրկնությունները: Նեղինակը նույնիսկ իր աշխատանքի վերջում, այդ ամենի համար կարծես արդարացում գտնելով՝ գրում է. «Մեկնաբանելով ժողովուրդների, կամ առանձին վերցրած մեկ ժողովրդի պարմությունը, անխուսափելիորեն փարվում ես կրկնություններով, որ թվում է, թե աշխատում ես նոր վկայություններ փնտրել ամրապնդելու համար հինը և կամ լրացնել այն նոր մտքերով»⁹: Որպես սավաճի հավասարում, Գլինկան քիչ անց շարունակում է. «Քննելով հայ ժողովրդի պարմությունը, համոզվածությամբ կարելի է ասել, որ ո՛չ թե առանձին դեմքեր, այլ ողջ ժողովուրդն է ջանացել հայրենիքի ճակատագրի համար... Իրադարձությունները, բարքերը, օրենքները՝ բոլորն էլ ակնհայտորեն և անվերապահորեն վկայում են այդ մասին»¹⁰: Դրանով սակայն, հեղինակը չի սահմանափակվում և վկայակոչում է ֆրանսիական մի պարբերականի այն միտքը, թե՛ «նվաճող ժողովուրդներից շատերը, որոնք ցնցել էին աշխարհը, երկրի երեսից վերացան, կարծես թե երբեք էլ չեն եղել: Եւ մինչ նրանք Եւրոպան վեր էին ածում սովի ու ավերածության, **հայերն Ասիայում ապավինելով արդարադրականության, գիտականության ու միասնականության ոգուն, իրենց նախնիների օրինակով դիմակայեցին այլ ցեղերի հետ ձուլվելու վտանգին և կազմեցին արևելյան քաղաքակրթությունը**»¹¹: Շարունակելով ֆրանսիական պարբերականի միտքը, հեղինակն իրավացիորեն նշում է, որ «խաղաղասիրական և նահապետական կառավարման ոգին ավելի քան երեք հազարամյակ պահպանել է Նայասարանը՝ չխորշելով ո՛չ ներքին, և ո՛չ էլ արտաքին փոթորիկներից»¹²:

Այսպեղ ևս Գլինկան կարարում է հայագիտական իր կարևոր եզրակացություններից մեկը. «Ինչ վերաբերում է հայերին, պետք է համոզվածությամբ ասել, որ այն ժամանակ, երբ միջին դարերի թանձր մշուշը պարել էր եւրոպացիների միտքը... հայերը չդադարեցին հարստանալ նոր գիտելիքներով և այն

8 Մաս 2, էջ 94:

9 Անդ, էջ 215:

10 Անդ, էջ 216:

11 Անդ, էջ 217:

12 Անդ:

սիրով հաղորդեցին իրենց սերունդներին»¹³: Անարարակույս, այս եւ բազում այլ խորհրդածություններ բարձրացնում են Գլինկայի ուսումնասիրության հայագիտական արժեքը եւ կրկնակի հեղափոխություն առաջացնում նրա պարամագիտական ժառանգության հանդեպ: Ուստի, պարահական չէր, որ այս աշխատությունը դարձավ այն անկյունաքարը, որի հիման վրա հեղափոխվում ձևավորվեց եւ զարգացավ հայագիտության ռուսական պարամագիտական միտքը: Գլինկայի հայոց պարմության փեսության փրամաբանական շարունակությունը հանդիսացավ **«Հայ ժողովրդի պարմության փեսությանը վերաբերող վավերագրերի ժողովածուի»** հրատարակությունը¹⁴: Նրա նախաձեռնողներն ու հրատարակիչները Լազարյաններն են: Հիմնավորելով ժողովածուի ձեռնարկման անհրաժեշտությունը՝ հեղինակները գրում են. «Եթե ֆրանսիացիներն ու գերմանացիները ուսումնասիրում են աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի պարմությունը, որպեսզի նրա օգնությամբ նոր լույս սփռեն անցյալի իրադարձությունների վրա եւ լրացնեն դրանք, ապա հարկ է, որ այն Ռուսաստանում եւս հատուկ ուշադրության արժանանա»¹⁵: Գործը ձեռնարկելու մյուս շարժառիթը հեղինակների այն մտահոգություն է, որ «մինչ օրս մեզանում հայոց պարմությանը նվիրված ուսումնասիրությունները քիչ են, իսկ ռուսերեն թարգմանված հատվածները հեռու են այն իրողությունից, որպեսզի բավարար պարկերացում փան մի ժողովրդի մասին, որը **ժամանակին առաջին փեղեկից մեկն է գրավել լուսավորչալ ժողովուրդների շարքում**»¹⁶:

Հայոց գրի ու մարենագրության մասին ուշագրավ մարքերի կարելի է հանդիպել նաեւ Ի. Ի. Շոպենի աշխատություններում: Քննելով հայ մշակույթին վերաբերող հարցերը՝ Շոպենը գոհունակությամբ ընդգծում է, որ **«ամենից սուրբ ու անձեռնմխելի ժառանգությունը, որ հայերը թողել են իրենց սերունդներին, մայրենի լեզուն է** : Բոլոր ազգերից միայն հայերը կարողացան հազարամյակների խորքից՝ Նոյից սկսած մինչեւ մեր օրերը, իրենց սերունդներին փոխանցել եւ ամբողջականության մեջ պահպանել թանկագին այդ պարզամը»¹⁷: Նեղիմակը հատուկ նշում է նաեւ գիտելիքների հանդեպ հայերի ունեցած մեծ սերը. «Իրենց կարողության սահմաններում,- գրում է Շոպենը,- նրանք ամենուր նպաստեցին լուսավորության եւ գիտության զարգացմանը, եւ այն հայր, որը ժամանակին հնարավորություն չի ունեցել կրթություն ստանալու, միջոցներ չի խնայել իր զավակի կրթության համար»¹⁸:

13 Անդ, էջ 8 - 9:

14 Shu' Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч.I-III, М.,1833-1838 гг.с.I.

15 Անդ, էջ 1:

16 Անդ, էջ 1 - 2:

17И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, с.180.

18 Անդ, էջ 207:

Անդրադառնալով հայ պարմիչների գործերին՝ Շոպենը նշում է, որ չնայած հայ պարմագրությունն իր նշանակությամբ ու կարեւորությամբ զիջում է հին աշխարհի մյուս երկրների պարմագիրությանը, սակայն «նրա նվաճումները մշտապես համահունչ են եղել դարի ոգուն ու ազգի ունակություններին... Նայ պարմիչներն ի հատուցումն այս թերության,- գրում է նա,- մշտապես փրապել են գնահատելի արժանիքների՝ համեսությունը զուգակցելով գիտելիքների հետ եւ չափից ավելի րեղի չեն փվել սեփական երեւակայությանը: Նայ պարմիչներից եւ ոչ ոք, ապշեցուցիչ նորություններով հանդերձ, երբեք չի ձգարել փայլել փառօրինակ ու փարակուսելի մրթերով... **ընդհակառակը, նրանց գործերն աչքի են ընկնում մաքուր բարոյախոսությամբ եւ բարօրության կոչ են սևում**»¹⁹:

Շոպենը հայ պարմիչներին բարձր է գնահատում նաեւ այն բանի համար, որ նրանք «մեծ մասամբ ակնապեսի ու ժամանակակցի աչքերով են ներկայացրել իրադարձությունները, ուստի, հավաստիության առումով վստահություն են ներշնչում»²⁰, թեպէտ, միաժամանակ նկատում է, որ հայ պարմիչների գործերում փրապելում է իրադարձությունների կրոնական մեկնաբանությունը: Նեղինակը նշում է հայ պարմիչների մեկ այլ դրական դրսևորում եւս. «Նայ պարմիչների օգնությամբ,- գրում է նա,- հայագետները լրացնում եւ հարստացնում են հին եւ միջին դարերի պարմական իրադարձությունները»²¹: Շոպենը ճշմարտացի է նաեւ, երբ գրւում է. «այս գործը դեռեւս սկզբնական փուլում է միայն եւ հայագիրության հետագա խորացումը կրասնապարկի մեր գիտելիքները»²²: Դժվար չէ նկատել, որ իր եզրահանգումներում հեղինակը, անշուշտ, վեր է կանգնած պարմական պաշտոնյայի իր աստիճանից եւ հայ պարմագրությանը նվիրված բաժինն ավարտում է հայ պարմիչների ներկայացումով՝ սկզբում այբբենական, իսկ հետո նաեւ՝ ժամանակագրական կարգով:

Եզրափակելով բաժինը՝ Շոպենը կարարում է հետևյալ պնդումը. «Նայ պարմագիրության առթիվ հարց է ծագում. ինչի՞ց է, որ հայոց նշանավոր լեզուն, որը հարուստ է իր ինքնատիպ գրականությամբ, լեզու, որն այդքան մեծ դեր է խաղացել պարմության մեջ, ինչպե՞ս կարող էր գիրական աշխարհում մնալ համընդհանուր մոռացության մեջ՝ մինչեւ 1819թ. Փարիզում Սեն-Մարտինի գրքի հանդես գալը: Որտեղից է գալիս եւրոպացի արեւելագետների այդ անարարությունը, հարկապես եթե նկատի ունենանք, որ արեւելքի հին ժողովուրդներից հայերն ամենից ամուրը հաստատվեցին Եւրոպայում»²³: Նեղինակն, իհարկե, փորձում է պարասխանել առաջադրված հարցին. «Դասագրքերի բացակայությամբ հազիվ թե կարելի լինի բացատրել այդ բացը, - գրում է Շոպենը:

19 Անդ, էջ 182:

20 Անդ:

21 Անդ, էջ 185:

22 Անդ:

23 Անդ, էջ 208:

- Հավանաբար, դրանում բացասական ազդեցություն է գործել ամենից առաջ գրքային գրաբարյան լեզուն, որն էապես փարբերվում է ժողովրդի խոսակցական լեզվից»²⁴: Բայց էականը դա չէ. Շուպենը համոզմունք է հայտնում, որ հայագիտությունը այսուհետ լուրջ ուշադրության կարժանանա Ռուսաստանում. «Այժմ Երոպան ջանասիրաբար ձգտում է արժանին հատուցել անցյալի հարցում: Շարք համալսարաններին կից բացվել են հայագիտական ամբիոններ, հայ պարմիչներն արագորեն թարգմանվում ու փարաժվում են, եւ պետք է հուսալ, որ շուտով ռուսական կառավարության հովանավորությամբ այդ դասական լեզուն իր արժանի փեղը կգրավի Արեւելքի մյուս լեզուների շարքում»²⁵:

Իվան Շուպենի «Նոր նշումներ Կովկասի հին պարմության եւ նրանում բնակվողների մասին» գիրքը գրեթե դուրս է մնացել մեր պարմաբանների ուշադրությունից: Ինչպես ինքն է գրում, «նշումներին ձեռնամուխ է եղել նպատակ ունենալով՝ փեղեկություններ հավաքել Կովկասի հին շրջանի պարմության մասին: Իմ նպատակն է եղել նաեւ, - գրում է Շուպենը, - ուշադրություն հրավիրել Անդրկովկասի ժողովուրդների պարմության երեք հնագույն փարեգրությունների վրա, եւ համեմատելով դրանք, փարբերակել նրանց միջեւ եղած համամասնությունները»²⁶:

Շուպենի հիշարարկած երեք հնագույն փարեգրություններից առաջինը Մովսես Խորենացու «Հայոց պարմությունն» է, մյուսը՝ Մովսես Կաղանկարվացու «Աղվանից աշխարհի պարմությունը», երրորդը՝ վրացական «Վախթանգի պարմությունը»: Առաջինի մասին հեղինակը գովեստով է խոսում. «Մովսես Խորենացու պարմությունն ավելի ամբողջական է եւ բոլոր առումներով հավասարի» - գրում է նա²⁷: Ինչ վերաբերում է Կաղանկարվացու պարմությանը, Շուպենը նշում է, որ «հեղինակի հաղորդած փեղեկությունները վերին աստիճանի հեղաբրբի են»²⁸: Երրորդ աղբյուրը, սակայն, նրան այնքան էլ վստահություն չի ներշնչել. «Վախթանգի պարմության մասին նույնը չի կարելի ասել, - գրում է Շուպենը, - քանի որ այդ փարեգրությունն իմ մեջ որոշակի թերահավատություն առաջացրեց»²⁹:

Հաջորդ ռուս պարմաբանը, որի աշխատություններում կարելի է հանդիպել հայոց պարմագրությանը վերաբերող հարվածների, նշանավոր ռազմական պարմաբան Վ. Պոպովն է, թեպետ մեր պարմագիտությանը ռուս գիտականն առավել հայտնի է որպես կովկասյան պարբերազմների հմուտ մասնագետ: Մեր կարծիքով, սակայն, նրա գիտական ժառանգության գնահատության հարցում մոռացության է մատնված մի կարևոր բաժին, որում քննարկվում են ոչ թե պա-

24 Անդ:

25 Անդ:

26 И. И. Шопен. Новые заметки к древней истории Кавказа и его обитателей, СПб, 1866, с. I.

27 Անդ:

28 Անդ:

29 Անդ:

տերագմական իրավիճակներ, այլ կարարվում է հայոց պարմության քննական համառոտ վերլուծություն: Այդ բաժինը Պոպրոնյի գրքում վերնագրված է մեկ ընդհանուր խորագրով՝ «Արարարի երկիրը»: Ռուս պարմաբանը թեպետ համառոտ, սակայն պարզ ու մաքուր ձևով ներկայացնում է Նայասարանի բնաշխարհը, առանձնակի նշում հայերի կողմից աշխարհում առաջինը քրիստոնեությունը պաշտոնապես ընդունելու փաստը. «Այս ժողովրդի առանձնահատկությունն այն է, - գրում է նա, - որ նույնիսկ օրար փրապետությունների շրջանում նրանք պահպանել են *իրենց հավատը, լեզուն ու հոգևոր ընդգծված կերպվածքը, այն ժամանակ, երբ հարևան տերությունները, որոնք ժամանակին տնօրինում էին աշխարհի հակադրակողմը, քաղաքական հզորության կորստի հետ միասին կորցրեցին նաև իրենց բարոյական ինքնատիպությունը և ձուլվեցին մյուս ազգերի հետ*»³⁰:

Պոպրոն, ռուս ընթերցողին տեղեկացնելով հայոց պարմության կարևոր անցքերի մասին, ամենից առաջ շեշտում է նրա դաստիարակչական նշանակությունը. «Անհրաժեշտ է հիշել հայոց պարմությունը, նրա բազմադարյան պայքարի հերոսական էջերը... որից հայ ժողովուրդը կարողացավ դուրս գալ թեև առանց աղմկալի հաղթանակների, սակայն լիակատար հանդիսավորությամբ՝ թույլ չտալով ոչնչացնելու իր հոգևոր կերպվածքը»³¹: Շարունակելով ներկայացնել հայոց պարմության կարևորագույն անցքերի անդրադարձը՝ հեղինակը շարադրում է տեղեկացնել, որ ինքը չի հավակնում լինել հայոց պարմությունը քննողի դերում, սակայն նպատակ է ունեցել «նկարագրել հայ ժողովրդի բարոյական կերպարը, որն այդքան արտահայտիչ է բնութագրական է պարմական բազում դրվագներում»³²: Դրանով հանդերձ, Պոպրոն արդեն դարձի ավարտին լրացրեց ռուս այն հայագետների շարքը, որոնք այդքան կարևորությամբ էին ընդգծում հայ ժողովրդի բարոյական կերպարը, նրա նվիրվածությունը մշակույթին ու հոգևոր արժեքներին:

Գրքի հաջորդ բաժինը կրում է «Հին Նայասարան» վերնագիրը: Ներկայացնելով հայոց պարմությունը՝ Պոպրոն, ի փառքերություն նախորդների, այն չի լցնում պարմիչներից քաղած զանազան տեղեկություններով, այլ հաղորդում է գրավիչ ու փոքր-ինչ գեղարվեստական շարադրանքի ոճ: Այսպես, ընդգծելով հայոց պարմության հին շրջանի կարևորությունը Առաջավոր Ասիայի ընդհանուր պարմության մեջ՝ նա գրում է. «Պարմությունը հայկական ցեղերին գրավ *մրավոր ու քաղաքական զարգացման բավականին բարձր ստիճանում*: Երկիրը կառավարվում էր թագավորների կողմից՝ մերթ ինքնիշխան, մերթ գրավելով դաժան նվաճողների փրապետության փակ, որոնք արյունով

30 В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, СПб, 1885 с. 653.

31 Անդ, էջ 654:

32 Անդ:

Էին հեղեղել ողջ Ասիական արեւմուտքը»³³: Բաժինն ավարտվում է ճշմարիտ մի ընդգծումով, որը մենք ուզում ենք մեջբերել ամբողջովին, քանի որ նրանից մտքեր համառոտագրելը գրեթե անհնարին է. «Խորասուզվելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, - գրում է նա, - հեղափոխողի առջև հառնում է ոչ թե հարստահարված երկրի երազային անշարժություն, այլ հարատև մի գործունեություն, որն ուղղված էր պահպանելու իր ոգին նվաճողների հալածանքներից... Այդ դաժան պայքարում, - շարունակում է Պոպրոն, - հայերը մեկ անգամ չէ, որ հանդես բերեցին բարոյական բարձր որակներ: Այս ժողովուրդը, որն այդպես էլ ի վիճակի չէր նվաճումների և այնքան քիչ մտահոգվեց իր քաղաքական ինքնությունության համար, միևնույն ժամանակ հզոր ապացույց եղավ, որ արիության բացակայության մեջ չէ բազմադարյան փրկապետության բացառությունը, և այն ժամանակ, երբ կարողացել կամ անհրաժեշտ է համարել պայքարել, իր մեջ աներեւակայելի ուժ և արիություն է գտել»³⁴: Սխալված չենք լինի ասելու, որ այս մտքերի մեջ է նրա հայագիտական նպատակ ողջ հմայքը: Ռազմական պատմաբանի նման խոստովանությունն, իրոք, անարժեք լինել չի կարող:

Պոպրոն հայ ժողովրդի բարոյական բարձր հատկանիշը հավաստող փաստարկ է համարում նաև եկեղեցու և հավաքի հանդեպ ունեցած նրա մեծ նվիրվածությունը. «Հավաքի համար մղված մշտնջենական պայքարում, - գրում է նա, - հայ ժողովրդի համար ոչինչ էր թվում թե՛ իր կյանքը, թե՛ կայքը, և թե հասարակական ու անձնական մյուս բոլոր բարիքները»³⁵: Հեղինակը բարձր է գնահատում նաև հայ եկեղեցու ջանքերն իր ժողովրդի միավորման համար. «Հայ եկեղեցին փառքեր երկրներում ցրված հայերին մեկ ժողովրդի և միասնության կոչ էր անում»³⁶, - գրում է նա: Որքանով նկատեցինք, ժուս պատմաբանն անդրադարձել է այդ ժամանակաշրջանի էական երևույթներին:

Ռուսաստանում այնքան էլ սովոր չէ այն պատմաբանների թիվը, որոնք փորձեցին գույր հայագիտական գործեր գրել: Պարճառն, իհարկե, անբացարժեղի չէ. անդրադառնալ մի երկրի պատմությանը, որն այդքան լիքն է իրադարձություններով և ունի պատմագիտական հարուստ գրականություն, համաձայնենք, որ այդպիսի գործ ձեռնարկելու համար հարկ էր ունենալ աղբյուրագիտական բավարար պարզաստիճանություն: Այնուհանդերձ, չնայած այդ դժվարություններին, ժուս պատմաբանների մեջ գտնվեցին նաև այդպիսիները: Նրանցից մեկը Վիկտոր Աբազան էր. 1888 թ. Ս.Պետերբուրգում լույս տեսավ նրա «Հայոց պատմություն» գիրքը: Աշխատության ներածականում Վ. Աբազան պարզաբանում է իր ուսումնասիրության նպատակը. «Հայաստանի մասին ակնարկները

33 Անդ, էջ 656:

34 Անդ, էջ 698 - 699:

35 Անդ, էջ 702:

36 Անդ, էջ 703:

բավականին հազվադեպ են, մինչդեռ հայոց պատմությունն արժանի է լուրջ ուսումնասիրության: Հնագույն ժամանակներից սկսած, նա իր վրա է սեղծել հզոր քրեությունների ուշադրությունը: Բարոյական փեսակերից,- շարունակում է Աբազան,- հայերն Արեւելքում քրիստոնեական աշխարհին մատուցել են մեծագույն ծառայություններից մեկը՝ հեթանոսների դեմ մղած դարավոր ու անհավասար պայքարում մնալով որպես քրիստոնեական հավաքի հասարակություն նվիրյալներ: Եւ թեպետ Հայաստանն ու նրա ժողովուրդը քաջ հայրենի են պատմական գրականությանը, այնուհանդերձ, նրանք կրկին արժանի են հանգամանալից հետազոտության»³⁷:

Եթե Աբազայի շարադրանքին մոտենանք հայագիտության մեջ նորություն ասելու իմաստով, հեղինակն, անշուշտ, նոր բան քիչ է ասում: Ավելին, եթե կուգեք, նույնիսկ կրկնում է նախորդներին: Սակայն խորանալով շարադրանքի մեջ, արդեն հստակվում է Աբազայի ուսումնասիրության բուն նպատակը. «Հայերի՝ հողագործական այս ժողովրդի մասին փոփոխությունների անբավարարությունը մեզանում հանիրավի եզրակացությունների առիթ է տվել,- գրում է նա: - Շատերը հայերի մեջ միայն առևտրականներ են փնտրում, մինչդեռ այդպիսի բնութագրումների հիմքում չկան ո՛չ պատմական փոփոխություններ, եւ ո՛չ էլ նույնիսկ եւրոպական արեւելագետներն ունեն նման հիմնավորումներ... Այս բնորոշումներն ըստ էության իրական չեն, իսկ հիմքում՝ անարդարացի», - եզրակացնում է Վ.Աբազան³⁸: Ընդ որում, հայոց պատմությանը վերաբերող դեպքերն ու իրադարձությունները հեղինակը ներկայացնում է Մովսես Խորենացու եւ հայ մյուս պատմիչների հաղորդած փոփոխությունների հիման վրա: Իսկ թե որքանով է ծանոթ հեղինակը հայ պատմիչների գործերին, այդ մասին վկայում է նաեւ այն փաստը, որ ներկայացնելով օրինակ, Խորենացու «Հայոց պատմությունը», նա միաժամանակ նշում է, որ թեպետ այդ պատմության չորրորդ գիրքը մեզ չի հասել, սակայն նրա գոյության մասին վկայում է Թովմա Արծրունին, որն ապրել է Թ.-Ժ. դարերում: Կամ, օրինակ, «Խորենացու հայոց պատմության համար Աստվածաշնչից բացի աղբյուր են ծառայել նաեւ օտար աղբյուրները»³⁹: Ինչպես նկատում ենք, հեղինակը բավականին ծանոթ է եղել հայ պատմիչների աշխատություններին: Մյուս կողմից, համեմատության մեջ դնելով Սեն-Մարտենի ու եւրոպացի մյուս հայագետների հաղորդած փոփոխությունները, Աբազան այնուհանդերձ, առավելությունը տալիս է հայ պատմիչներին:

Աշխատության աղբյուրագիտական հենքը հարուստ է: Աբազան իր ձեռքի տակ ունեցել է բավականին հարուստ հայագիտական գրականություն. հրապարակի վրա արդեն կային թե՛ հայ պատմիչների գործերի թարգմանությունները, եւ թե՛ ռուս ու եւրոպացի պատմաբանների աշխատությունները: Եւ ինչի մասին էլ

37 В. А.Абаза, История Армении, СПб. 1888, с.1.

38 Անդ:

39 Անդ, էջ 20:

որ գրում է հեղինակը, այդ ամենը հասարակարար է պարմական անհրաժեշտ փոփոխություններով, որոնք նա քաղել է հայ եւ օտար պարմիչների աշխարհայեցողություններից: Այսպես, անդրադառնալով հայ ժողովրդի ծագման հարցերին, Աբազան փոփոխություններ է բերում հույն պարմիչ Սյրաբունից, եւ ապա ավելացնում. «Հայերը մերժում են Սյրաբունին... իրենց համարում են առաջնածին ժողովուրդ եւ իրենց ծագումը փնտրում են Նոյի ժամանակները»⁴⁰:

Շարունակելով համառոտակի ներկայացնել հայոց պարմության կարեւորագույն իրադարձություններն ու դեպքերը՝ Աբազան այն հասցնում է մինչեւ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հեղինակը հարույկ անդրադարձ է կատարում նաեւ հայերի գաղթին եւ ներկայացնում է հայերի զանգվածային փոխաշարժերը Բագրատունյաց թագավորության ժամանակներից սկսած: Այդ նկարագրություններում նա հարույկ շեշտում է հայ ժողովրդի կարեւոր բնութագրերից մեկը՝ նվիրվածությունն իր արմարներին ու հավատին. «Հալածված հայ ժողովուրդը, - գրում է Աբազան, - Կիլիկիայի անկումից հետո էլ շարունակում էր պահպանել **ազգայինն ու հավատը, լեզուն, ուրը նրան պարզամեղ էին իրենց նախնիները**»⁴¹: Հայոց գաղթերի ու ծանր փորձությունների նկարագրություններից հետո հեղինակն այնուհանդերձ գրնում է, որ հայ ժողովրդի միակ փրկությունն իր հյուսիսային հարեւանի՝ Ռուսաստանի հետ կապերի ամրապնդման ու սերտացման մեջ է: Ուստի, համառոտ ներկայացնում է հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը, հասարակարար դրանք պարմական իրողություններով՝ Պետրոս Մեծի ժամանակներից սկսած մինչեւ 1826-1828թթ. ռուս-պարսկական պարերագմը: Աբազայի կարծիքով, Ռուսաստանին միանալով, «հայերի առջեւ բացվեց մի նոր հավատակից հայրենիք, որտեղ ազգայինը, հավատն ու ավանդույթները կաշարպանվեւն ամեն փոսակ ուրնձգություններից»⁴²:

Ռուս մեկ այլ հեղինակի՝ Աննինսկու աշխարհայեցողություններից մեկը նվիրված է հայ մարենագրությանը եւ կրում է «Հին հայկական պարմիչները որպես պարմական աղբյուրներ» վերնագիրը: Հեղինակը բարձր է գնահատում հայ պարմագիրներին, նշում նրանց գործերի կարեւորությունը հին աշխարհի պարմության ուսումնասիրության խնդրում: Աննինսկին գրքում փորձում է փայլ հայկական աղբյուրների համակողմանի վերլուծությունը, թեպէտ, գրնում է, որ հայկական աղբյուրների հավաստիության գնահատական փայլը դեռեւս վաղ է, քանի որ, ինչպէս ինքն է գրում, «կանցնի որոշ ժամանակ, երբ կարելի կլինի վերջնականապէս հասարակել այդ աղբյուրների իրական նշանակությունը»⁴³:

Հայ պարմիչներից Եղիշեի գրքի ռուսերեն թարգմանության առթիւ հանդրադրություն էր գերելել նշանավոր «Отечественные записки» ամսագ-

40 Անդ:

41 Անդ, էջ 98:

42 Անդ, էջ 104:

43 Ա. Աննինսկий, Древние армянские историки, как исторические источники, Одесса, 1899, с. I.

րում՝ «նոր գրքեր» խորագրի տակ: Նադորդագրությունը սկսվում էր ուշագրավ ներածականով. «Քրիստոնյա ժողովուրդներից քչերին հաջողվեց առանց սուրբ մերկացնելու պահպանել իրենց հավատը: Նավարի համար պարերագմների դարաշրջանը, որի ընթացքում փառավորվեցին շատ ժողովուրդներ, վերաբերում է նաև հայերին, ժողովուրդ, որի համար այդ պայքարը վերածվեց կենաց-մահու կովի: Նայասրանի համար այդ պայքարն այնքան ծանր ու դժվարին էր, որ պարմությունը չի կարող լուծյան մարնել այդ իրադարձությունը»⁴⁴: Իր ընթերցողին ներկայացնելով Վարդանանց պարերագմի խորհուրդն ու իմաստը՝ հանդես էր գալիս խորհրդածություններ է կատարում Նայասրանի անցած պարմական ուղու շուրջ. «Իր աշխարհագրական դիրքի պարճառով կտրված լինելով քրիստոնյա հզոր փերություններից և բոլոր կողմերից շրջապարված սկզբում հեթանոսական, իսկ այնուհետև մուսուլմանական երկրներով, Նայասրանը մշտապես եղել է իր այլադավան հարեանների գոհը: Ուստի չպետք է զարմանալ, որ նմանօրինակ արյունահեղ իրադարձություններով հանդերձ, -շարունակում է ամսագիրը,- հայերի մեջ երբեք չի մարել նվիրվածությունը քրիստոնեական հավատին»:⁴⁵ Ըստ արժանվույն գնահատելով Եղիշե պարմիչի գործը՝ հանդես է առաջին հերթին նշում է նրա համաշխարհային նշանակությունը. «Որպես պարմական նյութ, գրքի լույս ընծայումը խիստ կարևոր է: Նայասրանի պարմությունը մեզանում գրեթե անհայտ է, մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, աշխարհագրական իր աննպաստ դիրքի պարճառով, նա մշտապես բախման մեջ է եղել համաշխարհային պարմությունը կերպողների հետ և այդ պարմության իմացությունը կարող է լրացնել մեզ հայրենի շատ իրադարձություններ: **Ավելին, մի ժողովրդի ճակատագիր, որն այդքան փոքրություններից հեղու կարողացել է պահպանել իր հավատը, լեզուն ու ազգայինը, ինքնին մեզ գրկում է անտարբեր վերաբերմունքից**»:⁴⁶

Այսպիսով, եզրափակելով ներկա հրապարակումը /ներ խոսքը,/ կարելի է անվերապահորեն արձանագրել, որ ռուսական աղբյուրները բարձր գնահատականի են արժանացրել հայ ժողովրդի ջանքերը սեփական սրտմտության, լեզվի և հավատի պահպանության խնդրում, ինչը կարծում ենք, որ այսօր էլ դեռ չի կորցրել իր հնչեղությունը:

44 Отечественные записки, 1853, т. 89, с. 113.

45 Ամլ:

46 Ամլ, էջ 115: